ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 05.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/49

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.09.2017թ. թիվ 03/26-3/16945-17 գրությամբ «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 11.09.2017թ. թիվ ԴՎԱ/3023 գրության հիման վրա, 20.09.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.09.2017թ. թիվ ԴՎԱ/3023 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ի միջև 02.05.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-20/1-7 ծածկագրով պայմանագրի 3.1.7 կետի «բ» ենթակետը (առկա է մասնակցի գրավոր դիմումը՝ պայմանագրով նախատեսված «Ապրանքների փաթեթավորման տոպրակներ (հողապարկ)» ապրանքատեսակի մատակարարման անհնարինության վերաբերյալ)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. օգոստոսի 31-ից միակողմանի լուծել է վերը նշված գնման պայմանագիրը»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած իստին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Մուրադ Նալբանդյանը:

3. <u>«Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Խորհուրդը դիմել է «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.09.2017թ. թիվ 03/26-3/16945-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայանալիք նիստի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/49 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 20.09.2017թ. թիվ 03/26-3/16945-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.09.2017թ. թիվ ԴՎԱ/3023 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ի միջև 02.05.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-20/1-7 ծածկագրով գնման պայմանագիրը, ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի պետի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին 12.07.2017թ. ուղղված զեկուցագիրը, ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ին ուղղված 20.07.2017թ. թիվ 792 գրությունը, «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին ուղղված 09.08.2017թ. գրությունը, Պատվիրատուի կարծիքը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ի միջև 02.05.2017թ. կնքվել N ՇՀԱՊՁԲ-20/1-7 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակակարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար (հավելված N3):
- 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

• 3.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե՝

ա) մատակակարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետումկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Պայամանգրի Հավելված 1-ով նախատեսված Ապրանքների տեխնիկական բնութագրի և Հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2017թ. 2-րդ եռամսյակում մատակարարել թվով 15,000 հատ արպրանքների փաթեթավորման տոպրակ (հողապարկ) (պոլիէթիլենային, ոչ սննդային, բեռնունակությունը ոչ պակաս 50 կգ, չափերը՝ լայնությունը 50 սմ, բարձրությունը 100 սմ, թույլատրելի շեղումները՝ լայնությունում և բարձրությունում՝ 1 սմ)՝ 675.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի պետը 12.07.2017թ. զեկուցագիր է ներկայացրել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին և հայտնել, որ «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ն տրամադրել էր պոլիէթիլենային տոպրակի նմուշ, որի չափսերը և որակական ցուցանիշները չէին համապատասխանում պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրին, այն է՝ բեռնունակությունը ոչ պակաս 50կգ, և դրանով պայմանավորված առաջարկել է օրենսդրությամբ սահմանված կարգով լուծել Պայմանագիրը:

Պատվիրատուն 20.07.2017թ. գրությամբ դիմել է «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ին՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ Պայմանագրի լուծումը հնարավոր է Պայմանագրի 3.1.7 կետի 3.1.7.1 ենթակետի «բ» դրույթի (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի) պահանջներին համապատասխան: Նույն գրությամբ Պատվիրատուն առաջարկել է «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ին՝ նշված ժամանակահատվածում կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները և մատակարարել տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք:»:

ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի պետը 08.08.2017թ. զեկուցագիր է ներկայացրել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին և հայտնել, որ «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ի կողմից Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի և ղեկավարվելով

Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետով՝ առաջարկել է միակողմանի լուծել Պայմանագիրը՝ կիրառելով սահմանված տույժերն ու տուգանքները:

«Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ն 09.08.2017թ. դիմել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին՝ հայտնելով, որ չի կարող մատակակարել ՀՀ պաշտպանության նախարարության և «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ի միջև 02.05.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-20/1-7 ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը, և խնդրել է լուծել Պայմանագիրը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 08.09.2017թ. դիմել է «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ին՝ հայտնելով, որ, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը, ինչպես նաև Ընկերության գրավոր դիմումը՝ պայմանագրով նախատեսված ապրանքատեսակի մատակարարման անհնարինության վերաբերյալ, 31.08.2017թ. Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքը ողջ ծավալով և սահմանված ժամկետում չմատակարարելով, խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորություններն, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը

հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևէ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.09.2017թ. «Հովհաննես Մարտիրոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**